



Դու ես կերտում քո ժամանակը:
Համոզված եղիր՝ տարիներ հետո
Քո կերտած ժամանակը լավն է լինելու...

Բն ժամանակը

№ 08
ՍԵՊՏԵՄԲԵՐ
2018

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ՈՉ ՄԻ ՊԱՇՏՈՆ ԿԱՄ ԿՈՉՈՒՄ ՉԿԱ, ՈՐ ՀԱՎԱՍԱՐ ԼԻՆԻ ԵՎ ԿԱՐԵԼԻ
ԼԻՆԻ ՀԱՄԵՄԱՏԵԼ ՄԱՐԴ ԿՈՉՈՒՄԻ ՀԵՏ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԲԱՆԻՄԱՅ, ԿԻՐԹ, ԲԱՐՁՐ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ ՈՒՆԵՑՈՂ ՌԻՄԱՆՈՂՆԵՐՆ ԵՆ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՆ



Անգելինա Համբարձումյան

Ուսանողությունը հասարակության այն կորիզն է, որ հնարավորություն ունի երկրի կառուցման համար կարևոր հիմքեր դնելու: Մեր գրուցակիցն այսօր ԱրՊՀ ՌԻՄ Նախագահ Դիանա Խաչատրյանն է. սովորում է Արցախի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ բաժնի 4-րդ կուրսում: Երբ ընդունվել է 20 տարեկան է, բայց կարողանում է համատեղել և ուսանողի, և կնոջ, և արդեն 2-րդ տարին է ուսանողական խորհրդի նախագահի պարտականությունները: Դիանա, որն է ուսխորհրդի դերը: Ի՞նչ առաքելություն է այն կատարում: -Ուսանողական խորհրդի հիմնական նպատակը ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունն է, որը եղել և մնում է առաջնային: Բացի դրանից, զգալի աշխատանքներ են կատարվում ուսանողների ուսումնագիտական գործունեությունն ու ակտիվ ստեղծագործական կյանքը բովանդակալից դարձնելու նպատակով: Ի՞նչ միջոցառումներ եք կազմակերպում ուսանողական կյանքը ավելի հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար:

-Մենք միշտ կազմակերպում ենք տարբեր միջոցառումներ՝ պարային ֆլեշմոբեր, էքսկուրսիաներ, արշավներ, շաբաթօրյակներ, ինչպես նաև հանրօգուտ աշխատանքներ: Տոն օրերից բացի, մենք նաև այլ մարզամշակութային, ուսումնական և ժամանցային միջոցառումներ ենք կազմակերպում, օրինակ՝ ինտելեկտուալ խաղեր, որոնց մասնակցում են մեծ թվով ուսանողներ: Պետք է նշեմ, որ մեր կարևոր միջոցառումներից մեկը պարբերական հանդիպումներն ու քննարկումներն են ԱրՊՀ ղեկավարության հետ, որոնց ընթացքում բազմաթիվ ուսանողական հարցեր իրենց լուծումներն են ստանում: Ուսումնական տարվա սկզբին կազմակերպում ենք նաև առաջին կուրսեցիների երդման արարողություն, որից հետո ծանոթության երեկո, որի նպատակն է ավագ կուրսեցիների փորձն ու գիտելիքները փոխանցել առաջին կուրսեցիներին: -Նախորդ ուստարվա ընթացքում կազմակերպած միջոցառումներից որո՞նք կառանձնացնեիր: -Անցած տարում իրագործվեց «Ուսանող-աշակերտ-գինյոր» միասնության ուժը» ծրագիրը, որին մասնակցություն ունեցան 250 ուսանող, ԱՀ բոլոր շրջաններից աշակերտներ ու մեծ թվով գինյորներ: 2018 թ.-ը նշանավորվեց նաև Արցախյան շարժման 30-ամյակով, որին նվիրված հանրապետությունում, այդ թվում նաև մայր բուհում, կազմակերպվեցին բազմաթիվ միջոցառումներ: Նախ փետրվարի 13-ին բազմաժանր հանրահավաքը, որը սկսվեց ԱրՊՀ-ից, որի կազմակերպչական հարցերում մեծ ներդրում ունեցավ ուսանողական խորհուրդը: Տարվա ուշագրավ ծրագրերից է նաև Արցախյան շարժմանը նվիրված համահայկական ուսանողական ֆորումը, որին մասնակցեցին հայաստանյան առաջատար բուհերի ներ-



Դիանա Խաչատրյան

կայացուցիչներ, ինչպես նաև ուսանողներ Արցախի տարբեր բուհերից: -Հետաքրքիր է, իսկ սոցիալապես անապահով ուսանողների խնդիրները որքանով են գտնվում ուսխորհրդի ուշադրության առանցքում: -Մենք միշտ ձեռնարկում ենք հնարավոր բայեր այդ խնդիրները լուծելու համար և կարող ենք նշել, որ ուսման վարձավճարների գեղջման տեսքով նյութական օգնություն են ստացել թվով 6 ուսանող, ընթացքի մեջ է նաև հանրակացարանը էլեկտրական սալօջախներով և համացանցով ապահովելու հարցը: -Ուսանողական խորհուրդն ի՞նչ կազմակերպությունների հետ է համագործակցում: -Ուսանողական խորհուրդը համագործակցում է մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության, Արցախում գործող հասարակական կազմակերպությունների և տարբեր բուհերի ինքնավար կառույցների հետ, ինչն իր դրական նպաստն է բերում մեր գործունեությանը: Հարցազրույցը՝ Անգելինա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ, լրագր. 4-րդ կուրս

Կ Ա Ր Ո Տ Ի Կ Ա Ն Չ Ո Վ

Գեղեցիկի հետ շփումը վեհացնում, ազնվացնում է հոգիդ, մոռանում ես կյանքի հոգսերն ու մանր պատճառները, ընթացիկ մարդկանց պատճառած դառնությունները: Մոգական է գեղեցիկի ազդեցությունը: Այս մտորումների մեջ բայերս ուղղում են դեպի կանաչապատ ու ծաղկաշատ պուրակ հանգստություն որսալու, բայց չեն հասկանում ինչ է ինձ մտահոգում ամենից առաջ... Չգարմանք, եթե ասեմ՝ ոչ այնքան կեղծիքը, որքան հանդուրժողականությունը դրա հանդեպ, ոչ այնքան չարությունը, որքան դրա դեմ չպայքարելը, ոչ այնքան փառասնությունը, որքան ուրիշի դափնիները գողանալը: Եվ հանկարծ իմ այն խառն ու մոլոր մտքերը ցիրուցան եղան, երբ ես լսեցի քաղաքի փողոցով հոսող մարդկային օվկիանոսի հորձանուտով սահող նրհար ու ծեր կնոջ լացի ձայնը: Չկարողացա անտարբեր անցնել: Մոտեցա, հանգստացրեցի նրան, և մենք միասին մտաքննարկեցինք պուրակը: Կիտր անուր բռնել էր ձեռքիցս և այնպես էր վստահաբար քայլում ինձ հետ, կարծես իր թոռնուհին լինեի... -Գիտե՞ս, աղջիկս, մի պահ ինձ թվաց, թե տղաս կանգնած է իմ դիմաց, և արտասվելով խնդրում է, որ գրկեմ իրեն, բայց երբ մի քայլ առաջ գնացի, նա չբացավ ինձ կրկին իմ կարոտի հետ մենակ

թողնելով: Մեկ-մեկ մտածում եմ՝ ե՞ս եմ շուտ ծնվել, թե՛ իմ կարոտը: Այն կարոտը, որն արդեն 27 տարի է կեղեքում է սիրտս, կսկիծ ու երգ դառնում: Պատերազմից հետո, տղայիս անհայտ կորածների շարքին ընդգրկեցի, իմ միակ գավակին, իմ տան ծրագին... Եվ այդ օրվանից իմ կարոտի ծայրը չի երևում, վերջ չկա: Ամեն օրվա մեծ մասը անցկացնելով միայնակ՝ ես հասկանում եմ նորին մեծությունը կարոտի հազարաթև ու հազարերանգ լինելը. հասկանում և ինձ եմ վերագրում բոլոր որոշումներս մայրերի ցավն ու վիշտը, նրանց տանջանքները, սպասումից մաշվող սրտերը և ամեն անգամ ցանկանում գնել բոլորից այդ սրտակեղեք պարունները և հեռանալ անսահման հեռու՝ նրանց մի քիչ թեթևություն պարգևելով, սակայն գուր եմ այդ ջանքերն ու անհմար: Լալիս էր կիկնը: Ինչպե՞ս կարող էի հանգստացնել նրան, եթե ես նույնպես չէի կարողանում զսպել ինձ: Մի քանի րոպե լուռ մնալուց հետո ես սրբեցի կնոջ արցունքներն ու նրան խնդրեցի երբեք չհուսահատվել, չհանձնվել, ապրել երազելով, բանգի այն կյանքը մի մեծ առեղծված է և հնարավոր է, որ վաղը հայրենի օջախի դուռը բացի հարեմիքից: Մայրամուտ էր: Օրն ավարտվեց՝ ինձ մտորումները հունցելով և նրանց խառ-



նելով ևս մեկը: Բայերս ուղեցի տուն՝ գաղջ օդից շնչակտուր, հացիկ արտաբերելով աղոթքիս մրմունջները. «Տե՛ր ամենագոր, թող իրականանա բոլոր այն երփնավառ երազները, որոնք ոչ միայն իմ, այլև համայն տիեզերքի լուսեղեն հույսերի գուլալ ակունքներ են»:

Մերի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, լրագրու-
թյուն 3-րդ կուրս

«ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ՆԱՅԵԼ ԱՌԱՋ, ԵՐԲԵՔ ՉԿՏՐՎԵԼ ԳՐՔԻՑ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ՝ ԼԻՆԵԼ ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԶԱՎԱԿԸ»



Մանկավարժի աշխատանքը մեծ պատասխանատվություն է, որովհետև մանկավարժն է ձևավորում զարգացող սերնդի աշխարհայացքն ու գիտելիքներ տալիս նրան: Մեր այսօրվա զրուցակիցը, լինելով արդեն հիսուն տարվա փորձառու մանկավարժ, այդ պատասխանատվությունը վերցրել է փիրուն ուներին և մեծ սիրով ու նվիրվածությամբ է կատարում իր առաքելությունը:

Մոտ 40 գիտական հոդվածների և 10 գրքի, ուսումնասնաթղթական ձեռնարկների հեղինակ է ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս Սիրուն Բաղդասարյանը: Արցախյան ազգային-ազատագրական շարժման 30-րդ տարեդարձի կապակցությամբ Արցախի Հանրապետության մատուցած ծառայությունների համար նա ԱՀ Նախագահի կողմից պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Ս. Բաղդասարյանը հպարտությամբ է խոսում իր անցած ուղու մասին՝ վստահեցնելով, որ, եթե որևէ հրաշքով ժամանակի անիվը հետ դարձվեր, այս ինքը նորից կընտրեր մանկավարժի մասնագիտությունը:

«Մանկավարժությունն այնպիսի ոլորտ է, որ լավ մասնագետը պետք է իր մեջ ներդաշնակի հոգեբանի, իր առարկայի լավ իմացության, վարվելակերպի, առարկան մատուցելու և այլ հատկություններ: Ես անչափ սիրում եմ իմ աշխատանքը, սիրում եմ այն առարկաները, որոնք դասավանդում եմ, և նրանց, ովքեր ստանում են իմ առջև դրոշմը՝ իմ աշակերտներն էին, իսկ համալսարանում իմ ուսանողները,- ասում է նա,- երբ մտնում եմ լսարան, ուսանողներն արդեն իմ երեխաներն են, և ես նրանց անչափ սիրում եմ ու միշտ էլ նրանց կողմից նկատում եմ փոխադարձ հարգանք»:

Արցախյան շարժման առաջին իսկ օրերից Ս. Բաղդասարյանը եղել է շարժման ակտիվիստ, որովհետև, նախ բոլոր հանրահավաքներին մասնակցել է իր ընտանիքի հետ միասին, իսկ հետագայում հաճախակի ելույթներ ունեցել ամբիոններից:

«1988 թվականին առաջին անգամ Արցախում մի խումբ մտավորականների հետ բեմադրել ենք «Եղեռն»: Այս միջոցառումը շատ մեծ արձագանք է ունեցել հանրության շրջանում. ասեն, որ նախադեպը չի ունեցել: Միջոցառման կեսին էլեկտրականությունը կառավարության կողմից անջատվել է: Երևի արդեն տեղեկացվել էին, որ այսպիսի մեծ միջոցառում ենք անցկացնում: Ստիպված էինք միջոցառման մնացած մասը մոմերի

լույսի տակ անցկացնել, իսկ երբ ավարտեցինք, արդեն մուտքի մոտ մեզ սպասում էին պետական գույքի կոմիտեի և ոստիկանության ներկայացուցիչները, որպեսզի ձերբակալեին: Բարեբախտաբար գլխի ընկանք ու թատրոնի ետնամուտքով հեռացանք փրկվելով կալանքից»,- կսկիծով հիշելով թշնամու կողմից կատարած այդ տարիների դաժանությունները՝ պատմում է Ս.Բաղդասարյանը և նշում, որ 2015 թվականին Մեծ Եղեռնի հարյուրամյակին մի խումբ մտավորականների հետ ձեռնամուխ եղան նմանատիպ միջոցառման անցկացմանը, որին ինքը նույնպես մասնակցել ու նախարարության կողմից արժանացել է պատվոգրի: 1992 թվականին, երբ Արցախ էին ժամանել Բորիս Ելցինը և Նազարբաևը, կառավարության առաջարկով մտավորականության անունից Վերածննդի հրապարակում էլույթ է ունեցել նրանց առջև նաև Ս. Բաղդասարյանը:

«1992 թվականին, երբ վատ էր իրավիճակը, արդեն պատերազմական դրություն էր, Արցախի 120 զոհված ազատամարտիկների երեխաների տարել ենք Մոսկվայի շրջանի Պուշկինո քաղաքը, և այնտեղ մի առողջարանում մեկ տարի նրանց պահել ենք: Երեխաների ուսումնադաստիարակչական գործը ղեկավարել ենք նրանց առողջ անվնաս և ուսման մեջ չթերացած վերադարձնելով իրենց ընտանիքներին»,- հիշում է մեր զրուցակիցը՝ որպես պատգամ ընթերցողին հղելով ապրելու իր բանաձևը. միշտ նայել առաջ, ունենալ արժանապատիվ կեցվածք, չկտրվել գրքից ու գրականությունից և ամենակարևորը՝ լինել Արցախ աշխարհի արժանապատիվ զավակը:

Աննա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Լրագրություն, 3-րդ կուրս

ԴԱՍ՝ ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ



Օրերս բանասիրական ֆակուլտետի լրագրություն և հայոց լեզու ու գրականության բաժինների առաջին կուրսի ուսանողները կուրսի Ձինաիդա Բալայանի ուղեկցությամբ այցելեցին Արցախի պետական պատմա-երկրագիտական թանգարան:

Թանգարանի աշխատակիցը ուսանողներին ներկայացրեց այնտեղ պահվող մի շարք պատմամշակութային արժեք ներկայացնող ցուցանմուշներ: Էքսկուրսավար Իննա Ենգիբարյանը ցուցադրեց նաև արցախյան գորգերի հնաբույր տեսակները՝ բացահայտելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Հնագիտություն բաժնում կային բնության քարացած մուշներ, բրոնզե իրեր, ուրարտական ժամանակներից պահպանված կավանոթներ, հայկական, հռոմեական

և այլ ծագման դրամներ: Հետաքրքիր էր ազգագրության բաժնում ցուցադրված արցախյան նահապետական ընտանիքի տեսարանը. հայկական տարագրվ տատիկը ճախարակով թել էր մանուկ, իսկ պապիկը՝ տրեխ էր կարում: Ուսանողների ուշադրությանը ներկայացվեցին մի շարք լուսանկարներ, որտեղ պատկերված էին Արցախի սրբավայրերը, վանական համալիրները, բնության հետաքրքիր պատկերները:

Թանգարանի նոր բաժինները աչքի են ընկնում փաստագրական նյութերով, առանձին դրվագներով ցուցադրված էր 1992-94 թվականներին մղած Արցախի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը: Ուշագրավ էր նաև Մեծ Հայրենական պատերազմի պատմությունը ներկայացնող բաժինը՝ փառապանծ մարշալների կիսանդրիներով և անձնական իրերով: Էքսկուրսիան ուսանողների համար ունեցավ ուսուցողական, ճանաչողական, հայրենագիտական մեծ նշանակություն, որը յուրահատուկ բաց դաս էր:

Սիրանուշ ԱԴԱՄՅԱՆ
Լրագրություն 1-ին կուրս

ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԼՂՀ ԶՈՐՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻՎՆԵՐԻ ՀՈՒՇԱԹԱՆԳԱՐԱՆ

ԱրՊՀ-ում ուսանողների հետ տարվող աշխատանքներում մեծապես կարևորվում է նաև կուրսի աշխատանքի դերակատարությունը: Ուսումնական, մասնագիտական, գաղափարական-հայրենասիրական, հոգևոր բարոյական, գեղագիտական, առողջ կենսակերպի, բնապահպանական, մտահորիզոնի և աշխարհայացքի ընդլայնման, ազգային ինքնագիտակցության ձևավորման ուղղություններով կատարվող աշխատանքներն առաջին հերթին գնահատվում են ուսանողության կողմից:

Օրերս ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի ուսանողներս, մեր կուրսի Ձինաիդա Բալայանի նախաձեռնությամբ և ուղեկցությամբ, այցելեցին Արցախի զոհված ազատամարտիկների հուշաթանգարան: Այցը անչափ խորհրդանշական էր մեզ համար, քանի որ մեր ներկա օրվա համար մենք պարտական ենք հանուն հայրենիքի իրենց կյանքը զոհաբերած անմահներին: Ցուցասրահներում լուսանկարներից նայող նրանց հայացքները կարծես հորդորում էին մեզ լինել նրանց արժանի հետնորդները, կյանքի քառուղիներով քայլել հաստատ և գնահատել այն ամենը, ինչ իրենց արյան գնով հասել է մեզ՝ մոր սերնդիս: Այցի ընթացքում հնչած ելույթներն ուսանողների համար դասի նշանակություն ունեին: Նման միջոցառումները նպաստում են կրթադաստիարակչական գործընթացին:

Լուսինե Օհանջանյան,
ՀԼԳ 1-ին կուրս

«Քո ժամանակը»

ԱՐՑԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպարանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում